ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Ռադիոակտիվության հայտնագործումից հետո, երբ գնահատվեց նյութի մեջ ամփոփված հսկայական պոտենցիալ էներգիան, գիտնականների շրջանում մտավախություն առաջացավ, որ գիտության այս նվաճումը կարող է մարդկության համար չարիք դառնալ: Դեռևս 1903 թ. Պիեռ Կյուրին իր նոբելյան մրցանակի ստացման առիթով արտասանած ճառում ասում էր. «Հնարավոր է, որ հանցագործների ձեռքում ռադիումը կդառնա վտանգավոր զենք և տեղին է հարց տալ. արդյո՞ք մարդը շահագրգռված է բնության գաղտնիքների հետագա բացահայտմամբ, արդյո՞ք դրա համար նա բավականաչափ հասունացել է... արդյո՞ք հնարավոր չէ, որ դրանք բացասաբար անդրադառնան մարդկության ապագայի վրա»:

Մարդու իմացական և բարոյական զարգացումների անհամապատասխանության մասին մտահոգություններ են հայտնել 20-րդ դարի բոլոր խոշոր ֆիզիկոսները: Ատոմային զենքի ստեղծողներից մեկը տարիներ անց իր արածի մասին ասել է. «Մենք սատանայի գործ կատարեցինք»: մեկ ուրիշ ֆիզիկոս՝ Օտտո Գանը Հերոսիմայի և Նագասակիի դեպքերից հետո հակված է ինքնասպանության:

Բնության գաղտնիքների բացահայտումը մարդու սիրտը լցնում է հպարտությամբ, իր ինտելեկտուալ ուժերի հանդեպ հավատով, միաժամանակ ծնելով վախ ու մտահոգություն. կոնենամ հասարակությունը բավարար բարոյական գիտակցություն ու կամք, օգտագործելու գիտության նվաճումներն ի բարորություն մարդկության:

Այսօր աշխարհում գիտական հայտնագործությունները, ցավոք, մարմնավորվել են նաև զանգվածային ոչնչացման զենքերում ու տարատեսակ այլ գինատեսակներում: Այդուհանդերձ, շատ գիտնականներ լավատեսորեն են նայում ապագային, վստահելով մարդու հոգևոր ուժերին ու բարոյական իդեալների հաղթանակին: Այս լավատեսությունն է կիսում նաև բանաստեղծ Պարույր Սևակը.

Ես հավատում եմ նրա ծով խելքին
Եվ նույնիսկ նրա հոտառությանը,
Նրա մատների հոտ անհատնելի ճարտարությանը,
Նրա ոտների արդարությանը...
Ես հավատում եմ հավատին մարդու՝
Իմ այս հավատին: